ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող

Արամ Մեյմարյան

«14» 04 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 049 - 26

Նախաձեռնող՝ ***«Արխիտրոն» ՍՊԸ***
հ. Մասիս, 3-րդ թաղ, 10-րդ շենք, 3-րդ բն.

Գործունեությունը՝ **«Հարսնաքար» հանգստի գոտուց մինչև Սևանի թերակղզի հատվածի ճեմուղու կառուցում**
Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք

Առդիր՝ 11 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 049 - 26

«14» ապրիլի 2026թ.

Գեղարքունիքի մարզի Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության նախագծի և «Հարսնաքար» հանգստի գոտուց մինչև Սևանի թերակղզի հատվածի ճեմուղու կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝ «Արխիտոն» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագիծ, /«Բ» կատեգորիա/

Գտնվելու վայրը՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք

Ներածական մաս. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «Արխիտոն» ՍՊԸ-ի կողմից: Նախագծվող տեղամասը գտնվում է «Սևան» ազգային պարկի Լճաշեն Սևանի թերակղզի հատվածում: Գործունեությունն իրականացնելու է Գեղարքունիքի մարզի «Սևան» ԱՊ-ի «Հարսնաքար» հագստի գոտի-Սևանա լճի ափամերձ հատվածի 1902.0-1902.5 նիշում, կառուցվելու է 2,8 կմ երկարությամբ 6,5 մ լայնությամբ ճեմուղի:

Սևանա լճի առափնյա հատվածում կառուցապատման սահմանագիծ է հանդիսանում 1905 նիշը (1903,5 ջրի հեռանկարային մակարդակը և գումարած 1,5 մ ալիքի ազդեցության գոտին), սակայն ՀՀ կառավարության 2008թ. 1563-Ն որոշման պահանջներով առավել ցածր նիշերով առկա է ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքի անցկացման հնարավորություն:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ մասի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող ճեմուղու կառուցման նպատակն է բարձրացնել Սևանա լճի տվյալ ափամերձ հատվածի գրավչությունը, վերացնել առաջնահերթ լուծման կարիք ունեցող այնպիսի գործոններ՝ ճանապարհատրանսպորտային ենթակառուցվածքի ոչ լիարժեքությունը, ժամանցային հնարավորությունների բացակայությունը, սանհանգույցների բացակայությունը:

Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի «Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության նախագծի և

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

«Հարսնաքար» հանգստի գոտուց մինչև Սևանի թերակղզի հատվածի՝ 2.8 կմ երկարությամբ և 6.5 մ լայնությամբ 1902.0-1902.5 նիշով ճեմուղու կառուցում՝ 18200 քմ տարածքի վրա: Ճեմուղին անցնում է թերակղզու հարավային մերձափնյա գոտու երկայնքով, լճի ջրի եզրից 12-ից մինչև 100 մ հեռավորության վրա: Ուղեգծի երկայնքով առկա են հանգստյան տներ, անտառապատ հատվածներ: Ծառերի քանակները և տեսակները ճշտվելու են շինարարության ընթացքում, կապալառու կազմակերպության կողմից, Ազգային պարկի հետ համատեղ: Հին ծառերը կկտրվեն, իսկ արժեքավոր ծառատեսակները կտեղափոխվեն և կտնկվեն 1903,5 նիշից բարձր հատվածներում: 1903.5 մ նիշից ցածր հատվածներում, ջրի բարձրացմանը խանգարող բոլոր ծառերը, թփերը, համաձայն ՀՀ կառավարության որոշման, ենթակա են հատման:

Գործունեության ենթակա տարածքում առկա են առանձին տնտեսվարողների կողմից կառուցված ճանապարհների հատվածներ, որոնք իրականացված են հատվածական՝ բետոնի, սալիկի և այլ շինարարական նյութերով: Դրանք չեն ապահովում Սևանի ափի գծին զուգահեռ ճեմուղի ծառայելու գաղափարին նաև տարաբնույթ ծածկույթների ու ընդհատվածության պատճառով խաթարում են լճի գեղագիտական ընկալումը: Բացակայում են նաև ճանապարհային միասնական պատվածքը, կահավորումը, լուսավորության համակարգը և այլ տարրերը: Գոյություն ունեցող կարճ հատվածների լայնական թեքությունը չի համապատասխանում նորմերի պահանջներին, տարածքում ջրահեռացման որևէ միջոցառում իրականացված չէ:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հանգստի համար նախատեսված:

Ճեմուղին սկիզբ է առնելու «Մալիբու» հանգստյան գոտու տարածքից (պկ0+980) և մեղմ կորագծով, կրկնելով լճափի կորությունն, անցնելու է հարթ տարածքով մինչև վերջ՝ 2+363 պիկետը: Ամբողջ երկարությամբ ծրագիծը հատում է բազմաթիվ հանգստյան գոտիներ՝ բազմաբնույթ կառույցներով, անտառապատ հատվածներով: Նախատեսվում է ճանապարհների կառուցում ափի երկայնական հատվածով՝ 1902-ից մինչև 1902-5 նիշը: Միջին բարձրությունը հողի աշխատանքային նիշից կկազմի մոտ 0.5 մ: Որոշ հատվածներում ներգծվել են կորեր և ծրագծի՝ նշված չափորոշիչներից տատանվող հատվածներ՝ որոշ հատվածներում ջրահեռացման ավելի արդյունավետ կազմակերպման համար:

Ճեմուղին ունենալու է հետիոտնային և հեծանվային ուղի: Ճեմուղու կառուցումը կատարվելու է 10*20 սմ բազալտե եզրաքարերով՝ h=15 սմ խճային հիմքով: Իսկ Ճեմուղու լճին հարող շեպը (աջ կողմում) ամրացվելու է ճիմապատելով՝ 10 սմ հաստությամբ շերտով:

Ճանապարհի հատակագիծն անցնում է հիմնականում հանգստի գոտիների կառույցների և լողափի միջև ընկած հատվածով: Որոշ հատվածներում անցնում է արհեստական տնկված անտառածածկ հատվածներով՝ ինչը հատվածային բնույթ է կրում և գեղատեսիլ դարձնում ճեմուղուց բացվող տեսարանը: Հատակագծում շրջադարձի անկյունները նշահարված են շրջանային կորերով: Ոլորայնության գործակիցը՝ 0.16:

Երկայնական կտրվածքում կատարվել են փոփոխություններ՝ ապահովելով ճանապարհի ավելի արդյունավետ ջրահեռացում և մուտք դեպի հանգստի գոտիներ: Երկայնական կտրվածքում առավելագույն թեքությունները ընտրված են գոյություն ունեցող իրադրության համապատասխան, որպեսզի ապահովվեն հանգստի գոտիների մուտքերը:

Նախատեսվում է իջատեղեր (թեքահարթակներ) և մուտքեր՝ իրականացվող ճեմուղին հատում է բազմաթիվ իջատեղեր, և մուտքեր՝ հանգստի գոտիներից դեպի ճեմուղի և լողափ,

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

ինչպես նաև բուն ճեմուղուց դեպի լողափ: Հատող իջատեղերում և մուտքերում նախատեսված է իրականացնել պատվածք՝ 79.2 գծ.մ: Այդ հատվածներում նախատեսվում է ապահովել ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՍՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմեր պահանջները:

Իջատեղերում և մուտքերում ճանապարհային պատվածքը նախատեսված է իրականացնել հետևյալ կառուցվածքով՝ I շերտ՝ հատիկավոր ենթահիմք (ավազակոպճային շերտ), h=12 սմ, 722,2 քմ, I I շերտ՝ խճավազային հիմք, h=15 սմ, 648.0 քմ, III շերտ՝ Բ տիպի II մակնիշի խիտ մանրահատիկ ա/բ h=5 սմ, 648.0 քմ: Իջատեղերի պատվածքը շրջապատված է լինելու աջ և ձախ կողմերից 10x20 սմ չափի 288 գծ.մ երկարության եզրաշարով, իջատեղերի պատվածքի ընդհանուր մակերեսը կազմելու է 648.0 քմ: Ճանապարհային պատվածք՝ ճանապարհային վերակառուցման համար նախատեսված իրականացնել մեկ տիպով, հետևյալ կառուցվածքով՝ I շերտ՝ բնական քարե (բազալտ) պատվածք h=7 սմ, I I շերտ՝ ցեմենտավազե չոր խառնուրդ (30/70 հարաբերությամբ), h=3 սմ, IIIշերտ՝ գեոցանց, IV շերտ՝ խճավազային հիմք, h=20 սմ, V շերտ՝ ավազակոպճային շերտ, h=10 սմ, VI շերտ՝ գեոտեքստիլ: Բազալտե քարերը շարվելու են իրարից 1սմ հեռավորությամբ, իսկ այդ 1սմ լայնությամբ բացարկները լցվելու են մանրահատիկ ավազով:

Ջրահեռացումն նախատեսվում է իրականացնել 25x27 սմ ե/բ վաքերի միջոցով: Վաքերը ծածկվելու են թուջե ճաղավանդակով (330 x600), ճեմուղու ձախ կողմում ՊԿ0+000 – ՊԿ2+384.62-ը՝ 2384.62 գծ.մ երկարությամբ տեղադրվելու է 25x27 սմ ե/բ վաք, ընդհանուր 795 հատ 3 մետրանոց հատվածներով: Նախատեսված ե/բ վաքերը ոչ ստանդարտ չափերի են, դրանք անհրաժեշտ է պատվիրել ե/բ կոնստրուկցիաների գործարանում: Ե/բ վաքերի պատրաստման երկարությունը պետք է լինի 2980 մմ չափի, որպեսզի միմյանց կողք տեղադրելուց հետո օգտակար երկարությունը կազմի 3000 մմ: Ե/բ ջրահեռացման վաքերից անձրևաջրերը հեռացնելու համար 14 տեղ նախատեսված է կառուցել անձրևընդունիչ դիտահորեր, որոնցից ջրերը հեռանալու են ճեմուղու պատվածքի տակից 300 մմ տրամագծով կոյուղու պոլիէթիլային խողովակների միջոցով (SN4): Կոյուղու պոլիէթիլային խողովակի վերջնամասում նախատեսված է կառուցել՝ գլխադիրներ միաձույլ B15 դասի բետոնից (90x80x30 սմ): Ճեմուղին ապահովված է լինելու արտաքին լուսավորությամբ, տեղադրվելու են 140 հատ այլումինե հենասյուններ՝ լուսադիոտային լամպերով, 1394 հատ հատակին տեղադրվող լուսատուներ: Լուսավորման համար նախատեսվում է 1480 գմ և 1500 գմ երկարության մալուխի տեղադրում, որը լինելու է ստորգետնյա, անցկացվելու է PVC վինիպլաստե կոշտ խողովակով՝ ավազե անկողնով:

Համայնապատկերային վերելակը նախատեսվում է թերակղզու հարավային լանջին վերելակի տեղադրում՝ գրողների հանգստյան տան ճաշասրահից արևմուտք ընկած հատվածում: Դեպի համայնապատկերային վերելակ առկա է հիմնական ճանապարհից մոտեցում՝ 4.5 մ լայնությամբ: Վերելակը նախատեսվում է դեպի թերակղզի և վանական համալիր առավել կարճ, հարմարավետ հասանելիություն ապահովելու համար՝ բնակչության բոլոր խմբերի (սակավաշարժուն, հաշմանդամություն ունեցող), ինչպես նաև զուտ զբոսաշրջային նպատակներով՝ դեպի Սևանա լիճ բացվող գեղատեսիլ համայնապատկերն ընկալելու նպատակով: Վերելակի ստորին նիշում՝ հիմքային հատվածում, կրճատելու համար վերելակի 45 մ բարձրությունը և կայունացնելու կառույցը նախատեսված է 2 հարկի բարձրությամբ լրացուցիչ շինություն, որում կզետեղվեն մի շարք սենքեր՝ տվյալ տիպի կառույցի սպասարկումն առավել դյուրին կազմակերպելու նպատակով՝ տոմսերի վաճառակետ,

տեղեկատվական կետ, սանհանգույցներ, սրճարան: Շինությունը նախատեսված է կառուցել թեթև կոնստրուկցիաներով՝ մասնակի օգտագործելով տեղական շինանյութեր (քար) ինտեգրելով կառույցը մոտակա ժայռերին: Շինության տանիքը նախատեսվում է իրականացնել հարթ: Վերելակի դեպի դուրս հատվածը նախատեսված է թափանցիկ նյութերից, ինչը հնարավորություն կստեղծի մոտ 1 րոպե տևողությամբ վերելքի ողջ ընթացքում վայելել Սևանա լճի տեսարանը: Վերելակային հորի երեք կողաճակատային հատվածները նախատեսված են միաձույլ երկաթբետոնից՝ բնական քարե երեսապատմամբ: Կղզուց դեպի համայնապատկերային վերելակ նախատեսված է մետաղական կոնստրուկցիայով իրականացված կամրջային անցում: Անցումը նախատեսված է մետաղական ֆերմաներից՝ տախտակամածային պոլիմերային փայտե երեսապատմամբ: Կամրջի միջնամասի հատվածում 2 մետր լայնությամբ շերտը նախատեսված է իրականացնել թափանցիկ նյութով, որը կստեղծի էսքտրեմալ զգացողություններ այդ հատվածով անցնողների համար:

Նախատեսվում է երկու վերելակ, յուրաքանչյուրը նախատեսված է 25 անձի համար: "Սևան" ազգային պարկի համայնապատկերային վերելակի ջեռուցումը և օդափոխությունը իրականացվելու է գործող շինարարական նորմերի և կանոնների՝ ՀՀՇՆ IV-12.02.01-04 համաձայն: Կառուցվող շենքի նախագծի ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի մասը մշակվել է համաձայն առաջադրանքի, ճարտարապետաշինարարական գծագրերի, գործող շինարարական նորմերի և կանոնների, ՀՀՇՆ 40-01.01-2014 «Ջրամատակարարման և կոյուղու ներքին ցանցեր», ինչպես նաև ՎԵՈԼԻԱ ՓԲԸ-ի կողմից տրված տեխպայմանի: Նախագծում նախատեսվում են ներքին հետևյալ համակարգերը՝ ա. խմելու տնտեսական սառը ջրամատակարարում բ. կենցաղային կեղտաջրերի կոյուղի: Նախագծային լուծումները ընդունված են համաձայն СНиП 2.04.01-85 ՀՀՇՆ 40-01 01-2014: Սանտեխնիկական սարքերը մոնտաժվում են համաձայն СНиП 3.05.01-85: Համակարգը նախատեսված է շենքի խմելու, տնտեսական կարիքների համար: Ջրի մուտքը նախատեսվում է քաղաքային ջրմուղի տնտեսական հակահրդեհային ցանցից, մեկ մուտքագծով: Սրճարանի տաք ջրամատակարարման համար տեղադրված է 10 լ տարողության ծավալային էլեկտրական ջրատաքացուցիչ: Սարքավորումների միացումը կատարվում է պոլիպրոպիլենե խողովակներով d=15-20 մմ: Համակարգը նախատեսված է սանիտարատեխնիկական սարքերից տնտեսա-կենցաղային կեղտաջրերի հեռացման համար: Կոյուղու համակարգի խողովակները նախատեսված է իրականացնել D 50 մմ D 110 մմ կոյուղու պոլիվինիլքլորիդե (PVC) լայնուկավոր ՀՁ 21-26-100-80 խողովակներից: Մաքրման կայան նախատեսվում է տեղադրել ռուսական արտադրության Եվրոլոս տիպի համապատասխան հզորության կամ կարող է տեղադրվել նաև կեղտաջրերի նույնատիպ մաքրման այլ տեսակի մաքրման կայան՝ կայանը տեղադրվելու է 1905 նիշից բարձր:

Մինչև շինարարական աշխատանքների սկսվելը նախատեսվում է կատարել շինարարական հրապարակի (ուղեգծի) հատկացումը, շինարարական հրապարակի անհրաժեշտ ցանկապատումը, մոտեցման ճանապարհների կառուցումը, պահեստային տնտեսության ստեղծումը և շինարարության կարիքների համար անհրաժեշտ ծավալի կենցաղային նշանակության ու կոմունալ տնտեսության շինությունների նախապատրաստումը: Ցանկապատի առավել տեսանելի տեղամասում տեղադրել պատվիրատու և կապալառու կազմակերպությունների տվյալները /անվանում, էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար/, ծրագրի անվանման ու նպատակային նշանակության, շինարարական աշխատանքների սկզբի և ավարտի ժամկետների մասին տեղեկատվություն պարունակող վահանակներ: Նախքան

կառուցապատումը տարածքում կատարվելու են քանդման և ապամոնտաժման աշխատանքներ, մասնավորապես՝ տարածքում առկա 668.60 գծմ ծավալի մետաղական ցանկապատեր, ճաղաշարերի ապամոնտաժում, 140.0 տ տարաբնույթ աղբի տեղափոխում, 1609.7 քմ բետոնե սալերի և 2045.72 քմ բետոնե հարթակների, 60.60 խմ ցանկապատերի տակ բետոնե գոտիների քանդում, 3444 քմ մակերեսով ասֆալտբետոնե շերտի քանդում, 413.28 խմ խճային նախաշերտի քանդում, 1700.67 խմ քարե շինությունների քանդում, 1649.60 քմ մակերեսով փայտե տաղավարների քանդում, 63 հատ /116.83 տ/ մետաղական շինությունների ապամոնտաժում, 110 հատ /58.75 տ/ մետաղական տաղավարների ապամոնտաժում, 667.24 խմ մետաղական շինությունների բետոնե հիմնատակերի քանդում, 2.90 խմ բետոնե աստիճանների, 424.14 խմ բետոնե հենապատի քանդում: Նախատեսվում է կատարել տարածքի մաքրում կոճղաշիվերից և անկանոն աճած թփերից՝ 24000 հատ: Այնուհետև կատարել 56085.00 քմ մակերեսով տարածքի համահարթեցում՝ մեխանիզմներով:

Առաջացող շինաղբի ծավալը կազմելու է 9358.01տ, որը տեղափոխվելու է համայնքի համաձայնությամբ աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով: Տեղափոխման վայրը համայնքի կողմից կտրամադրվի շինթույլտվության փուլում:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում: Անցկացվելու է 60.0 գծ երկարության մետաղական ճաղաշար: Տեղադրվելու են 80 հատ փայտե նստարաններ, թուջե դեկորատիվ ծառամաններ:

Կանաչապատման գործընթացում կատարվելու է ծառերի թասակների բազալտե եզրաքարերով շարում: Կանաչապատման համար կատարվելու է 1400.00 քմ մակերեսի վրա 20 սմ բուսահողի փռում և հարթեցում: Կատարվելու է 276.0 քմ մակերեսի վրա խոտածածկի սերմի ցանքս՝ ձեռքով: Նախատեսվում է 2700 հատ սամշիթ, 38 հատ հացենի, 37 հատ գիհի վիրգինյան, 38 հատ թեղի տեսակի ծառերի տնկում: Ծառերը տնկվելու են ճեմուղուն զուգահեռ հատվածներում: Կանաչապատման աշխատանքների կատարման համար նախատեսվում է 3621.5 քմ մակերեսի ճմապատում: Կանաչապատման հատակագիծը գտնվում է մշակման փուլում, որը կներկայացվի «Սևան» ազգային պարկի համաձայնեցմանը և հաստատմանը:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով, ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով, ցանկապատել շինարարական հրապարակը համապատասխան նախագծի, շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ, հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ, շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով,
- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակել անջրթափանց թաղանթով,
-շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում, իրականացնել ստուգումներ՝ պարբերաբար, բացառել թափոնների այրումը բաց տարածքներում, փոշեորսիչ և փոշեճնշիչ սարքավորումների կիրառում՝ համաձայն քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի «ՀՀՇՆ 13-05-2026 «Շինարարական արտադրության կազմակերպում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն ու Հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N07-ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N02-Ն հրամանի պահանջների:

- Հողի բերրի շերտը կհանվի և կպահվի համաձայն՝ կառավարության 02.11.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան, բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը: Նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը կմաքրվի խոշոր քարերից, թփերից, կոճղերից, հողի բերրի շերտը օգտահանվելու է, հեռացվելու են ապարները, պահեստավորվելու է առանձին, ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկել խոտաբույսերով կամ հողաթմբերի ամրացնել, ծածկել անջրթափանց թաղանքով, հանվող հողային զանգվածը կուտակել տարածքում՝ ծածկելով անջրթափանց թաղանթով, շինարարական նյութերը տարածք կբերվեն օգտագործումից առաջ, կտեղադրվեն հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան կայանվելու է շինհրապարակի առանձնացված հատվածում, շինարարական տեխնիկայի լիցքավորումը և սարքավորումների վերանորոգումը կատարել գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:

Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է.

- գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար կմատակարարվի խմելու որակի ջուր՝ բերովի (շշերով), հողային աշխատանքների կատարման ընթացքում ջրատար (ջրապարունակ) հորիզոններին հասնելու դեպքում անհրաժեշտ է համապատասխան միջոցառումների կիրառում՝ ստորգետնյա ջրերի անկազմակերպ հոսքը կանխելու համար, բացառել Սևանա լճի ափի փոփոխությունները, ջրի որակական կազմի, ափի փոփոխությունները, ապահովել «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի պահանջները՝ պահպանել Սևանա լճի էկոհամակարգի բնական վիճակը՝ ջրի որակը, լճի և ափամերձ ցամաքային տարածքների բնական ու արհեստական լանդշաֆտները և կենսաբազմազանությունը, ապահովել Սևանա լճի էկոհամակարգի համար սահմանված նորմատիվները, կանխարգելել վնասակար նյութերի արտանետումը Սևանա լիճ, մեքենաների անիվների լվացման համար

կօգտագործվի տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, կամ օգտագործվելու է պարզարանի ջուրը, պարզարանում առաջացած նստվածքը կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով, շինհրապարակում տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումից առաջացած շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն տարածքում տեղադրված բիոզուգարան, շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում, շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների բետոնախատնիչ մեքենաներով՝ ըստ պահանջի, բետոնի լցվածությունը պետք է լինի վերահսկելի՝ ճանապարհներին բետոնանյութի արտահոսքը կանխելու նպատակով:

Գործունեության իրականացման ընթացքում բուսական և կենդանական աշխարհին հնարավոր ազդեցություններից զերծ պահելու համար նախատեսվում է՝ շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար, ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքների բուսածածկի մաքրում, տարածքի մաքրում կոճղաշիվերից և անկանոն աճած թփերից՝ «Սևան» ԱՊ-ի հսկողությամբ, բացառել նախագծից դուրս գոյություն ունեցող ծառերի հատումը կամ տեղափոխումը, ծառահումները և մաքրման աշխատանքները կատարվելու են Շրջակա միջավայրի նախարարության կողմից հաստատված «Սևան ազգային պարկի» կառավարման տարեկան պլանով նախատեսված միջոցառումների համաձայն, 1903.5-1905մ նիշը (1.5մ ալիքի ազդեցության գոտին) ծառատեսակների պահպանում, ճեմուղու հատվածով անցնող ծառերի տեղափոխումը կամ հատումը կատարել «Սևան» ԱՊ-ի համաձայնությամբ՝ պահպանելով ծառերի և ծառաթփուտային բուսականությանը հասցվող հնարավոր վնասի կանխարգելման պահանջները:

Շահագործման փուլում ապահովել նոր տնկված ծառերի և կանաչ գոտիների խնամքը՝ ծառերի կպչողականությունն ապահովելու և գազոնապատ տարածքները պատշաճ մակարդակով պահպանելու համար:

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է՝ կատարել քանդման արդյունքում առաջացող շինաղբի տեսակավորում, թափոնները տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով, դրանց տեղափոխումը կատարել հատուկ սահմանված երթուղիներով, նախապես հատկացված վայրեր՝ համայնքի համաձայնությամբ, խուսափել տարածքում վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակումից, աղբը կամ այլ թափոնները պետք է հավաքել հատուկ հատկացված տարածքում, պարկերի կամ արկղերի մեջ, տեղափոխել աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ: Շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնել թափոնների ջերմային վնասազերծում կատարող մասնագիտացված կազմակերպություններին, մետաղների մնացորդները տեսակավորել և հանձնել համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով, բացառել թափոնների բաց այրումը շինհրապարկում կամ տարածքից դուրս, բացառել թափոնների կուտակումը շինհրապարակից դուրս՝ կից տարածքներում, արտակարգ իրավիճակների դեպքում (բամու

ուժգնացում, փոթորիկ, ջրհեղեղ և այլ բնական երևույթներ) դադարեցնել շինարարական աշխատանքները:

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է, տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկան օգտագործել միայն սարքին վիճակում, հանգստի գոտու մոտակայքում աղմուկը պետք է հնարավորինս նվազեցվի, փոխադրամիջոցները պետք է զինված լինեն խլացուցիչներով, պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են հուշարձանների կամ հնագիտական շերտի ի հայտ գալու դեպքեր, դրանց պահպանությունն ապահովելու համար, ընկերությունն առաջնորդվելու է պատահական գտածոյի ընթացակարգով: Պատահական գտածոյի ընթացակարգը ներառում է՝ գտածոյի տեղամասում անմիջապես կանգնեցնել բոլոր աշխատանքները, տեղեկացնել տեղական իշխանություններին և մշակույթի նախարարության, գտածոյի բնորոշումը պետք է իրականացվի լիազոր մարմնի պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչության կողմից, հայտնաբերված իրերի հետ կապված հետագա քայլերը որոշվում են պատասխանատու մարմինների կողմից, այդ թվում դրանց տեղափոխման և պահպանման հարցը, հնագիտական շերտի կամ որևէ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու է համապատասխան լիազոր մարմնին: Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին: Լիազորված մարմինը կամ նրա մարզային ծառայությունն ապահովում է հայտնաբերված պատմամշակութային արժեքների հետազոտումը և դրանց պատմական, գիտական, գեղարվեստական կամ այլ մշակութային նշանակության բացահայտումը, ինչպես նաև սահմանում է այն միջոցառումները, որոնք պետք է ապահովեն պատմամշակութային արժեքների պահպանությունը:

Նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկումներ)՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված՝ այդ նպատակով նախատեսվում է՝ շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումների կիրառման հսկողություն, համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում՝ շինարարարական և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանման նպատակով, բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ ամենօրյա ռեժիմով, գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման սկզբում անտառային հատվածներում կատարել մոնիթորինգ՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլիացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով, շինտեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումների իրականացում՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառելու նպատակով, շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանման վերահսկողություն, բարեկարգման, կանաչապատման

աշխատանքների կատարման ապահովում, վերահսկում:

Պատճառաբանական մաս. Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի վարչական շրջանում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային լսումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը հիմնականում հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը, քննարկվել է գործունեության իրականացման նպատակահարմարությունը: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակմամբ:

ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի կողմից ստացվել են բացասական կարծիքներ, որոնցում նշվում է որ՝ ՀՀ կառավարության 2008 թվականի 1563-Ն որոշման պահանջներով 1905 մ բարձունքային նիշից ցածր նիշերում Սևան ազգային պարկի տարածքում չի թույլատրվում հիմնական օբյեկտների կառուցումը՝ բացառությամբ ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքի օբյեկտների վերաբերյալ:

Նշվածի վերաբերյալ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացվել են լրացուցիչ պարզաբանումներ՝ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի կողմից ներկայացված դիտարկումների վերաբերյալ: Մասնավորապես գրությամբ նշվել է, որ հանձնաժողովի ավելի վաղ տրված բացասական եզրակացության (հիմնված այն դիրքորոշման վրա, որ ՀՀ կառավարության 2008 թվականի 1563-Ն որոշման պահանջներով 1905 մ բարձունքային նիշից ցածր նիշերում Ազգային պարկի տարածքում չի թույլատրվում հիմնական օբյեկտների կառուցումը՝ բացառությամբ ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքի օբյեկտների վերաբերյալ տրված պարզաբանումը չի առնչվում նախագծով դիտարկվող գծային օբյեկտին, քանի որ ճեմուղին չի հանդիսանում ինժեներատրանսպորտային ենթակառուցվածք) վերաբերյալ ներկայացվող պարզաբանումը դարձյալ չընդունելու և իր բացասական դիրքորոշումը վերահաստատելու հետ կապված հայտնում ենք, որ հանձնաժողովի ներկայացված բացատրությունները կրում են ընդհանրական բնույթ և չեն կարող հիմք հանդիսանալ մի տարածքի կառուցապատման համար, որը գտնվում է Սևանա լճի մակարդակի վերականգնման նախատեսվող նիշից (1903.5 մ) ավելի ցածր գոտում և ալիքի բարձրությունը կարող է հասնել մինչև 1905.0 մ նիշը, ուստի կապիտալ ներդրումներն այդ նիշերի վրա աննպատակահարմար է և ոչ արդարացված: Հարկ է նշել, որ «ինժեներատրանսպորտային ենթակառուցվածք» եզրույթը կիրառվել է միայն ՀՀ կառավարության 2008 թվականի 1563-Ն որոշման դրույթներում: Միևնույն ժամանակ ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (UNECE) և տրանսպորտային ավելի լայն սահմանումների հիման վրա, ճեմուղին համարվում է ակտիվ տրանսպորտային ենթակառուցվածք (ոչ մոտորային տրանսպորտ), այն դասակարգվում է հետիոտների տեղաշարժը հեշտացնելու համար նախատեսված հետիոտնային և հեծանվային ենթակառուցվածքների շրջանակում: Դիտարկվող ճեմուղին դասում է այդ բնորոշմամբ նշված՝ ոչ մոտորացված տրանսպորտի համար ենթակառուցվածքի շարքին: Արդյո՞ք ճեմուղին այդ ենթակառուցվածքին չդասելու դիտարկումը նշանակում է, որ գրությամբ նշված նիշերի վրա կարող են իրականացվել տարանցիկ տրանսպորտային ուղիներ՝ մոտորացված տրանսպորտային միջոցների անցուդարձով, որոնց համար կատարվելիք

ներդրումները (լճի մակարդակի և ալիքի ազդեցության գոտու նույն սահմանված նիշերի պարագայում) նպատակահարմար են և արդարացված:

Ըստ ամենայնի՝ ՀՀ կառավարության 2008 թվականի 1563-Ն որոշման մեջ բացառությունն առնչվում է հենց տվյալ տիպի՝ ռեկրեացիոն ենթակառուցվածքի զարգացումը խթանող, արտակարգ իրավիճակներում հատուկ մեքենաների մոտեցումն ապահովող, սակայն ակտիվ մոտորացված տրանսպորտի համար չնախատեսված ենթակառուցվածքին:

Հարկ է նշել, որ ճեմուղու իրականացումը միտված է նաև հարակից լողափերի և հանգստի գոտիների առավել անվտանգ ու համարավետ մոտեցման ապահովմանը: Միևնույն ժամանակ, 1905.0 մ նշին հասնող ալիքի ազդեցությունը հաշվարկված է 1903.5 մ (ջրի մակարդակ) +1.5 մ (ալիքի ազդեցության գոտի) սկզբունքի հիման վրա, հետևաբար տվյալ բարձրության լճի ալիքը կարող է հասնել միայն՝ ջրի մակարդակը 1903.5 մ նիշին հասնելու պարագայում: Ներկայումս Սևանա լճի ջրի մակարդակը 2026թ. մարտի 1-ի դրությամբ կազմել է 1900.26 մ, և 1900.37 մ՝ 2025 թ. հունվարի 12-ի դրությամբ:

Ներկայումս առկա չէ լճի մակարդակի բարձրացման հստակ ժամանակացույց, սակայն հաշվի առնելով վերը նկարագրված դինամիկան՝ կարելի է արձանագրել, որ լճի մակարդակը նվազել է և ճեմուղու նիշին կարող է հասնել զգալի ժամանակահատվածում, ինչը նշանակում է, որ տվյալ ենթակառուցվածքը կարող է հաջողությամբ գործառնել այդ ժամանակահատվածում: Ընդ որում, ճեմուղու իրականացման համար օգտագործվող նյութերը դիմակայուն են ինչպես ալիքի, այնպես էլ ջրի անմիջական ազդեցությանը: Բացի այդ, անհրաժեշտության դեպքում կարող են հեշտությամբ ապամոնտաժվել և հավաքվել առավել բարձր նիշերի վրա՝ մինչ այդ ծառայելով ինչպես տնտեսվարողների և ԱՊ տնտեսական մուտքերի ապահովմանը, այնպես էլ այցելուների համար առավել գրավիչ և անվտանգ ենթակառուցվածքի իրականացմանը:

Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

Կառուցապատման ընթացքում անհրաժեշտ է ապահովել հետևյալ փորձաքննական պահանջների կատարումը՝

1. Շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական հրապարակից դուրս փոշու տարածումը կանխարգելելու նպատակով առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով՝ տարածքի ցանկապատում, շենքերի և շինությունների ծածկում համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով, օդերևութաբանական անբարենպաստ պայմանների առաջացման դեպքում լրացուցիչ միջոցառումների իրականացում, շինաղբի և շինարարական նյութերի պահում և տեղափոխում անթափանց ծածկոցով:
2. Շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացնել տարածքի կանաչապատում և բարեկարգում՝ տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ՝ դրանց հետագա պարտադիր ոռոգմամբ և խնամքով, ապահովել նախագծման թույլտվությունում և հաշվետվությունում ամրագրված կանաչապատման մակերեսը:

3. Շինարարության ընթացքում առաջացող թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում) իրականացնել «Թափոնների մասին» օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ բացառել թափոնների և շինարարական աղբի կուտակումները հարակից տարածքներում:
4. Ապահովել հաշվետվությամբ ներկայացված բոլոր բնապահպանական և մշտադիտարկումների միջոցառումների իրականացումը (օդի որակ, հողային և ջրային ռեսուրսների պահպանություն, աղմուկի և թրթռումների մակարդակ, շահագործվող տեխնիկայի պատշաճ տեխնիկական վիճակ):
5. Գործունեության իրականացման ընթացքում ապահովել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված ՀՀ-ում գործող սանիտարական կանոնների և նորմերի պահանջների կատարումը:
6. Առաջնորդվել «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի N205-Ն որոշման, 2008 թվականի դեկտեմբերի 18-ի N 1563-Ն որոշման դրույթներով:
7. Ճեմուղու կառուցման աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել հողային օրենսգրքի պահանջներով՝ չխախտելով քաղաքացիների և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Գեղարքունիքի մարզի Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության նախագծի և «Հարսնաքար» հանգստի գոտուց մինչև Սևանի թերակղզի հատվածի ճեմուղու կառուցման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Վարդան Հարությունյան